բեկերթ ըլլալու. և հրամանը կը կատարուի ամենայն խստութեամբ։

Տարակոյս չկայ որ տրուած գասը շատ ազգու և զօրաւոր էր. բայց այս օրուան օրս ոչ մի թագաւոր կը յանդգնի առ այն իբրև հասարակաց հայր ժողովրդեան։

Ծուռուիսն պատմեայ. Պաստուիթին Բուիլ-ղարոս. — Ատեն մ'երբ մարդիկ աւելի բարեկրօնք էին, կը հրամայէին ամենայնի, թէ կենդանի և թէ անկենդան արարածոց. բայց կը պատմեն թէ ամենայն ինչ կերպարանափոխ եղած ըլլայ երբ մարդիկ չարացան։

Օրինակի համար, մարդ մը փայտ կտրելէն և շեղջակուտելէն ետքը բաւական էր որ գաւազանաւ դպչի միայն, և ահա շեղջակոյտը կը սկսէր քալել ինքն իրեն ինչ ուղղութեամբ որ կը հրամայուէր։

Բայց եղաւ օր մ'որ կնոջ մէկը շեղջակոյտը գիմացէն քալեցնելու ատեն, ձանձրանալով քովէն հեռի քալելէն, կը նստի վրան. այն ատեն շեղջակոյտը կ'անսաստէ և կը դադրի քալելէն։ Կինը կը ցասնու և կը սկսի զարնել յայլ և յահեակ, բայց վայրապար. շեղջակոյտն այլ ևս չի յառաջեր։ Այն ատեն ձայն մը կուգայ երկնքէն որ կ'ըսէ.

« Կին դու, որովհետև ծուլացար և չարացար, փոխանակ շեղջակոյտն գլեզ տանելու, դու զանիկա տանիս »։

Այն ատեն կինը կը ստիպուի քակել գօտին, կապել փայտերն 'ի մի խուրձ, առնուլ թիկանցը վրայ ու տանիլ։

Գերազանցութիւն ընկերութեան. — Մարդիկ ոչ կրնան ապրիլ, ոչ բարւոք ապրիլ, ոչ մարդ ըլլալ և ոչ երջանիկ՝ առանց մէկմէկու. կապուած են իրարու հետ հասարակաց կարիութեան կապով։ Իւրաքանչիւր անհատ բաւական չէ ինքն իրմով. կերպով մը պէտք ունի բաղմացնել ինքզինքը բազմաց ձեռնտութեամբ. և կարծես թէ մենք առանձին ամբողջ մարմին չենք, այլ հատեալ մասունք զոր ընկերութիւն կը միացնէ։ Զրկեալք՝ արդարութիւն կը խնդրեն, տկարք՝ պէտք ունին զօրանալոյ, և սգաւորք՝ միսիթարութեան։

ԱՌԱԾՔ

— Նպատակը տեսնելը գիւրին է, բայց նեղը նպատակին հանդիպցնելը դժուարին։

— Հաւատարիմ բարեկամն որթոյ նման է, որ քովի ծառը չոր ալ ըլլայ՝ սիրով անոր կը ոլորուի։

— Եղածնէս աւելի կը կարծենք զմեզ, ու կարծածնէս ալ աւելի կ'ուզենք երևնալ։

— Որուն որ կարողութիւնը հաւասար է իր բաղձանացը, երջանիկ է այնպիսին. և որովհետև մարդուս կարողութիւնը քիչ բանի կը հասնի, անոր համար պէտք է չափաւորել իր բաղձանքը։

— Կեղծաւորն իր անկեղծութիւնը կը գովէ, ագահն իր առատաձեռնութիւնը, աշխարհասէրն իր հոմանաութիւնը, մեկ խօսքով՝ չարն իր բարութիւնը։

— Խնայողութիւնը ջահ մ'է որ չի ծածկուիր, ոչչափ մութը տանիս, այնչափ աւելի կը փայլի։

— Արքունեաց մէջ աւելի դիմակ կը գտնաս քան թէ դէմք։

— Մարդս իրմէն վեր եղած բանն իր երջանկութիւնը կը համարի։

— Հաւատք առանց բարեգործութեան գանգակ մ'է առանց լեզուի։

— Ինչանաց սիրտը քիչ մը մամէ չնեռած պէտի ըլլայ, քիչ մը շաքարէ, քիչ մ'ալ պղնձէ։

— Մարդուս կիրքը առագաստի նման է, վարպետ նաւապետը գիտէ և անոնցմով նաւը հնարգիտաս հասցնել։

— Տգիտութիւնը՝ գիշեր է մտաց, անլուսին և անաստղ գիշեր։

ՀԱՆԵԼՈՒԿ

Կարդ աշխարհի այլափոխեալ լիս թըւի.
Նախ աշակերտ դայ ուսուցչէ ըզկնի.
Նախ արտավար ապա արքայ երևի.
Ցառաջ դըպիր և քահանայ հետուի.
Յետ նախ ամառն ապա գարուն տեսանի.
Ցառաջ գիշեր լեռոյ երեկ լայնորդի.
Պիտդ ինդրեսջիր, ո՛ ընթերցող, քաջագէտ,
Եւ զիս տեսցես զի ակներև կամ յաչէտ։

digitised by A.R.A.R.@